

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Պետական բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականը ավարտվել է տնտեսական ակտիվության աճի բարձր ցուցանիշով, որն ուներ արագացման միտում տարվա վերջին ամիսներին՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության աճի արագացմամբ: Դեկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 14.0%՝ շուրջ 2.5 տոկոսային կետով արագանալով նոյեմբերի համեմատ: Արդյունքում հունվար-դեկտեմբեր ամիսների ՏԱՑ-ը նույնպես արագացել է՝ հասնելով 9.1%-ի:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹




2025թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճին ամենամեծ նպաստումն ունեցել է ծառայությունների աճը՝ շուրջ 2.5 տոկոսային կետով: Մյուս ոլորտները նույնպես ՏԱՑ-ի աճին դրականորեն են նպաստել. ընդ որում, առևտրի, շինարարության և արդյունաբերության ոլորտների նպաստումները եղել են գրեթե հավասարաչափ՝ համապատասխանաբար 1.3 և 1.0-ական տոկոսային կետ:

Գյուղատնտեսության ոլորտում 2025թ. գրանցվել է 5.6% աճ, որի նպաստումը ընդհանուր տնտեսական ակտիվության աճին կազմել է 0.4 տոկոսային կետ: Ընդ որում, գյուղատնտեսության աճի տեմպը էականորեն գերազանցել է նախորդ տարվա (2024թ.) ցուցանիշին, որը կազմել էր 1.6%:


¹ ՏԱՑ-ի նախորդ՝ որոշ ամիսների ամսական աճի ցուցանիշները ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից վերանայվել են, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվար-դեկտեմբերին, տոկոսային կես



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտի աճը տարեվերջին բավականին բարձր է եղել: 2025թ. դեկտեմբերին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 38.6% աճ՝ նախորդ ամսվա 31.7%-ի համեմատ արագանալով 6.9 տոկոսային կետով: Կուտակային աճի ցուցանիշը տարվա արդյունքներով հասել է 4.7%-ի, թեև տարվա առաջին տասն ամիսներին ոլորտում գրանցվում էին էական բացասական ցուցանիշներ:

2025թ. հունվար-նոյեմբեր ամիսների² տվյալներով, արդյունաբերության աճին ամենամեծ նպաստումն են ունեցել «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» ոլորտները՝ համապատասխանաբար 1.2 և 0.7 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերությունը հունվար-նոյեմբեր ամիսներին շարունակել է անկում ապրել, որի չափը կազմել է 1.9% և ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.4 տոկոսային կետով: «Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի նպաստումը շարունակել է լինել գրեթե զրոյական:

Սակայն պատկերն այլ է միայն նոյեմբեր ամսվա ցուցանիշները ուսումնասիրելու դեպքում: Այսպես, նոյեմբերին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 31.7% աճ, որի 26.9 տոկոսային կետը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 36.2% աճով: Ընդ որում, մշակող արդյունաբերության աճին հիմնական նպաստում ունեցող ենթաոլորտը «հիմնական մետաղների արտադրություն» է, որը նոյեմբերին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է շուրջ 2.9 անգամ և մշակող արդյունաբերության աճին նպաստել է 26.8 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերությանը նույն ժամանակահատվածում նշանակալի նպաստում է ունեցել նաև «սննդամթերքի արտադրություն» ենթաոլորտը՝ շուրջ 4.5 տոկոսային կետով:


Հունվար-նոյեմբերի արդյունքներով, բացի «հիմնական մետաղների արտադրությունից», արդյունաբերությանը շարունակել են էական բացասական նպաստում ունենալ նաև «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն», «խմիչքների արտադրություն» և «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» ենթաոլորտները՝ համապատասխանաբար 1.0, 0.9 և 0.7 տոկոսային կետով:

Ըստ էության, արդյունաբերության աճի տեմպի արագացումը առավելապես պայմանավորված է եղել «հիմնական մետաղների արտադրություն» ենթաոլորտի էական աճով, ինչը իրենից ներկայացնում է ոսկու վերաարտահանում:

² Արդյունաբերության ղեկավարներ ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը մնացել է բարձր մակարդակում: 2025թ. դեկտեմբերին շինարարության աճը կազմել է 20.5%՝ նույնների համեմատ արագանալով 3.3 տոկոսային կետով: Հունվար-դեկտեմբեր ամիսներին շինարարության աճը կազմել է 20.2%՝ արագանալով 0.1 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ շինարարության աճը հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտի աճի տեմպը նույնպես բարձր է, սակայն դեկտեմբերին դանդաղել է: Ծառայությունների ոլորտում 2025թ. դեկտեմբերին գրանցվել է 6.9% աճ՝ նույնների համեմատ դանդաղելով 4.3 տոկոսային կետով:

Արդյունքում դանդաղել է նաև կուտակային՝ հունվար-դեկտեմբեր ամիսների աճը՝ հունվար-նոյեմբերի 10.9%-ից հասնելով 10.5%-ի:

Ծառայությունների ոլորտի աճը, հունվար-նոյեմբեր³ ամիսների տվյալներով, շարունակում է պայմանավորված լինել «ֆինանսական և ապահովագրական գործունեության» (հիմնականում՝ բանկերի գործունեության) 15.8% աճով, որի նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին կազմել է 4.8 տոկոսային կետ: Ծառայությունների աճին էական նպաստում է ունեցել նաև «տեղեկատվություն և կապ» ենթաօլորտի 18.3% աճը, որի նպաստումը կազմել է 3.3 տոկոսային կետ: Ծառայությունների աճին շարունակում է բացասական նպաստում ունենալ տրանսպորտային ծառայությունների անկումը, որի տեմպը, սակայն, մեղմվել է՝ հասնելով 1.6%-ի՝ նախորդ ամսվա 2.6%-ի համեմատ, իսկ նպաստումը կազմել է - 0.2 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը տարեվերջին մնացել է ցածր մակարդակում: Առևտրի ոլորտի աճը 2025թ. դեկտեմբերին կազմել է 3.2%՝ նոյեմբերի համեմատ արագանալով շուրջ 1.7 տոկոսային կետով, սակայն կուտակային՝ հունվար-դեկտեմբեր ամիսների, աճի տեմպը մնացել է նույն մակարդակում՝ կազմելով 3.0%:

³ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների դեկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁴

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման աճի տեմպը և էականորեն արագացել է դեկտեմբերին:

Տարվա առաջին տասն ամիսների բացասական ցուցանիշներից հետո արտահանումն սկսել է ունենալ դրական միտումներ 2025թ. նոյեմբերին, իսկ դեկտեմբերին աճի տեմպն էականորեն արագացել է՝ հասնելով 34.3%-ի: Աճի տեմպի կտրուկ արագացումը պայմանավորված է ինչպես բազայի էֆեկտով (նախորդ տարվա դեկտեմբերին անկումը կազմել էր 48.6%), այնպես էլ նոր թափ հավաքող ոսկու վերաարտահանմամբ: Այնուամենայնիվ, կուտակային՝ հունվար-դեկտեմբեր ամիսների ցուցանիշը շարունակել է մնալ բացասական տիրույթում՝ կազմելով 36.1%՝ որոշակիորեն մեղմվելով հունվար-նոյեմբերի համեմատ:

Արտահանման անկումը, ըստ հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշների⁵, ինչպես և ընթացիկ տարվա նախորդ ամիսներին, առավելապես պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (դա հենց ոսկու վերաարտահանումն արտացոլող ապրանքախումբն է) արտահանման շուրջ 69.8% նվազմամբ, որի նպաստումն ընդհանուր արտահանման նվազմանը կազմել է 43.3 տոկոսային կետ: Սակայն այս ենթաճյուղի անկման տեմպն էականորեն մեղմվում է (հունվար-հոկտեմբերին անկումը կազմել էր 73.5%), քանի որ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նկատվում է վերաարտահանման աճ:

⁴ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:


⁵ Արտահանման դեկտեմբեր ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Մի շարք ենթաոլորտներ արտահանման աճին ունեցել են բացասական նպաստումներ, որոնց շարքում են «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «մանածագործական իրեր» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», որոնց ընդհանուր բացասական նպաստումը կազմել է 1.4 տոկոսային կետ:

Միևնույն ժամանակ, արտահանմանը նշանակալի դրական նպաստում են ունեցել «պատրաստի սննդի արտադրանք», «հանքահումքային արտադրանք», «սարքեր և ապարատներ» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր նպաստումը կազմել է շուրջ 4.0 տոկոսային կետ:

Եթե արտահանման աճը ճշգրտենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստման չափով (չեզոքացնենք վերաարտահանման ազդեցության զգալի մասը), ապա արտահանման աճը հունվար-նոյեմբերին կկազմի ընդամենը 2.7%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման աճի տեմպը և տարեվերջին կտրուկ արագացել է: 2025թ. դեկտեմբերին ներմուծման աճը կազմել է 30.4%՝ նոյեմբերի համեմատ արագանալով 15.5 տոկոսային կետով: Այստեղ ևս առկա է բազայի էֆեկտի ազդեցությունը: Հունվար-դեկտեմբեր ամիսների ներմուծման աճի ցուցանիշը մնացել է բացասական տիրույթում՝ կազմելով 23.6% և նախորդ ամսվա համեմատ մեղմվելով շուրջ 3.9 տոկոսային կետով:

Ներմուծման անկումը, ըստ հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշների⁶, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման շուրջ 70.0% նվազմամբ, որի բացասական նպաստումը կազմել է 31.0 տոկոսային կետ:

Ներմուծման աճին դրական նպաստում ունեցող ապրանքախմբերից առավել նշանակալի են եղել «պատրաստի սննդի արտադրանք» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի դրական նպաստումները, որոնք կազմել են համապատասխանաբար 1.1 և 0.6 տոկոսային կետ:

Եթե հաշվի չառնենք ոսկու վերաարտահանման ծավալների փոփոխության ազդեցությունները, ապա ներմուծման աճը հունվար-նոյեմբերին կլինի դրական, սակայն բավական ցածր՝ 3.6%-ի չափ:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁷

Անվանական աշխատավարձերի աճի տեմպն ընդհանուր տնտեսությունում մնացել է գրեթե նույն մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.4%-ով (նախորդ ամսվա համեմատ մնալով նույնը)՝ կազմելով 296,207 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.2%-ով (նախորդ ամսվա համեմատ մնալով նույնը)՝ կազմելով 322,307 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձի աճի տեմպն արագացել է՝ կազմելով 5.4% (նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով), իսկ աշխատավարձի չափը կազմել է 228,256 դրամ:

⁶ Ներմուծման դեկտեմբեր ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, դեկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2024-2025թթ. հունվար-նոյեմբերին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)





2025թ. դեկտեմբերին ՀՀ դրամի անվանական փոխարժեքը պահպանել է կայունությունը: Դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 382 դրամ՝ նախորդ ամսվա համեմատ մնալով նույն մակարդակում: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը փոքր-ինչ արժեզրկվել է՝ կազմելով 4.9 դրամ՝ նախորդ ամսվա 4.8 դրամի փոխարեն: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը դեկտեմբերին որոշակիորեն արժեզրկվել է՝ կազմելով միջինում 447 դրամ՝ նոյեմբերի 441-ի համեմատ:

Եթե համեմատենք նախորդ տարվա նույն ամիսների հետ, ապա ՀՀ դրամը 2025թ. ընթացքում արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 1.5%-ով, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է՝ համապատասխանաբար 2.7%-ով և 8.6%-ով:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Պետական բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը դանդաղել է դեկտեմբերին, սակայն հարկային եկամուտներինը՝ արագացել: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2025թ. դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել են 1.1%-ով՝ հիմնականում պայմանավորված այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների նվազմամբ: Հարկային եկամուտների աճը դեկտեմբերին կազմել է 17.3%, ինչի արդյունքում հունվար դեկտեմբերին հարկային եկամուտների աճը արագացել է՝ հասնելով 14.0%-ի:

Բյուջեի այլ եկամուտները (ոչ հարկային) 2025թ. նվազել են 6.8%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 62.1%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն (աճը՝ 21.0%), եկամտային հարկը (աճը՝ 11.8%) և շահութահարկը (աճը՝ 19.6%), որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 6.6, 3.2 և 2.8 տոկոսային կետ:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ.		2025թ.	
	Հունվար-դեկտեմբեր		Հունվար-դեկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	5.1	5.1	14.0	14.0
Ավելացված արժեքի հարկ	-1.5	-0.5	21.0	6.6
Ակցիզային հարկ	-1.9	-0.1	12.1	0.7
Շահութահարկ	4.4	0.6	19.6	2.8
Պետական տուրք	19.3	0.6	19.0	0.6
Մաքսատուրք	1.2	0.0	-1.3	0.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	65.7	1.8	-29.3	-1.2
Այլ հարկեր	-2.6	-0.1	-1.0	0.0
Շրջանառության հարկ	16.7	0.4	30.1	0.8
Եկամտային հարկ	7.2	1.9	11.8	3.2
Սոցիալական վճարումներ	14.5	0.6	12.7	0.5

Բյուջեով հաստատված պլանի համեմատ բյուջեի եկամուտները 2025թ. գերակատարվել են 48.2 մլրդ դրամով կամ 1.7%-ով, իսկ հարկային եկամուտները՝ 4.9 մլրդ դրամով կամ 0.2%-ով: Բյուջեի այլ եկամուտները, թեև նվազել են նախորդ տարվա համեմատ, բյուջեի պլանի համեմատ գերակատարվել են՝ շուրջ 54.0 մլրդ դրամով կամ 55.9%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները թերակատարվել են 10.8 մլրդ դրամով կամ 51.6%-ով:

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը տարեվերջին դանդաղել է: Ընդհանուր ծախսերը 2025թ. դեկտեմբերին աճել են ընդամենը 1.5%-ով՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի 7.1% աճով, իսկ կապիտալ ծախսերի ծավալը դեկտեմբերին նվազել է 7.7%-ով:

Հունվար-դեկտեմբեր ամիսներին ընդհանուր ծախսերի աճը կազմել է 11.8% (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.9 տոկոսային կետով), որին ընթացիկ ծախսերի աճի նպաստումը կազմել է 6.7 (աճը՝ 8.2%), իսկ կապիտալ ծախսերինը՝ 4.9 տոկոսային կետ (աճը՝ 26.0%) (ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 0.2 տոկոսային կետով):

2025թ. պետական բյուջեով հաստատված պլանի համեմատ ընդհանուր ծախսերը բոլոր խոշոր հոդվածներով թերակատարվել են: Այսպես, ընդհանուր ծախսերի թերակատարումը կազմել է 4.0% (136.5 մլրդ դրամ), ընթացիկ ծախսերինը՝ 3.5% (94.3 մլրդ դրամ), իսկ կապիտալ ծախսերինը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերինը)՝ 6.3% (47.4 մլրդ դրամ):

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Բյուջեի պակասուրդը զգալիորեն աճել է: 2025թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի շուրջ 419.3 մլրդ դրամի չափով պակասուրդ՝ շուրջ 11.5%-ով (կամ 43.2 մլրդ դրամով) մեծ լինելով նախորդ տարվա ցուցանիշից:

Բյուջեի պակասուրդի ցուցանիշը ևս թերակատարվել է: Այսպես, 2025թ. բյուջեով պլանավորվել էր ունենալ 604.0 մլրդ դրամի չափով պակասուրդ, սակայն փաստացի ցուցանիշը եղել է դրանից շուրջ 184.7 մլրդ դրամով, կամ 30.6%-ով պակաս:


5.4. Պետական պարտք

2025թ. դեկտեմբերի վերջի դրությամբ պարտքի աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: Դեկտեմբերին ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 13.2%-ով (նախորդ ամսվա աճը՝ 13.0%)՝ հասնելով 14.5 մլրդ ԱՄՆ դոլարի: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 13.8%-ով (նախորդ ամսվա աճը՝ 13.6%)՝ հասնելով 14.0 մլրդ ԱՄՆ դոլարի: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 12.8%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 10.0%-ով:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները ունեցել են նվազման միտում: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. դեկտեմբերին կազմել է 7.4%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.3 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 1.3 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 8.1%, որը 0.4 տոկոսային կետով ցածր է եղել

Նախորդ ամսվա ցուցանիշից և 1.8 տոկոսային կետով՝ նախորդ տարվա դեկտեմբերի ցուցանիշից:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը 2025թ. երկրորդ կեսում եղել է բավական կայուն և պահպանել է կայունությունը մինչև տարեվերջ: 2025թ. դեկտեմբերին 12-ամսյա գնաճի տեմպը կազմել է 3.3%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով շատ քիչ՝ 0.2 տոկոսային կետով: ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը 2025թ. ընթացքում նվազեցրել է ընդհանուր առմամբ 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.5% մակարդակում:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպն ունի որոշակի տատանողականություն, սակայն պահպանվում է բարձր մակարդակում: Ավանդների ընդհանուր ծավալը 2025թ. դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 15.4%-ով՝ պայմանավորված ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 18.2% և 5.9%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2025թ. դեկտեմբերին ավանդների աճը մեծամասամբ պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 7.7 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված

ավանդների ծավալները նույնպես դրական են նպաստել ընդհանուր ավանդների աճին:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը նույնպես պահպանվում է բարձր մակարդակում, սակայն 2025թ. վերջին ամիսներին ունեցել է դանդաղման միտում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 23.0%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.6 տոկոսային կետով): Աճել են և՛ ռեզիդենտներին, և՛ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները՝ համապատասխանաբար 22.2% և 48.7%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում իրավաբանական անձանց վարկերն աճել են 24.9%-ով, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը՝ 19.6%-ով: Վերջիններիս նպաստումները կազմել են համապատասխանաբար 12.4 և 9.8 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁸




2025թ. դեկտեմբերին բոլոր ոլորտներին տրամադրված վարկերն աճել են՝ դրականորեն նպաստելով վարկերի ընդհանուր ծավալի աճին: Առավել նշանակալի է եղել սպառողական վարկերի աճը (29.6%), որն ունեցել է 6.5 տոկոսային կետ նպաստում: Հատկանշական է, որ ծառայությունների ոլորտին տրամադրվող վարկերի աճն էականորեն արագացել է՝ հասնելով 21.4%-ի, իսկ նպաստումը ընդհանուր վարկերին հասել է 3.3 տոկոսային կետի՝ գերազանցելով հիպոթեքային վարկերի նպաստման չափը: Հիպոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերն ընդհանուր վարկերի աճին նպաստել են 3.1-ական տոկոսային կետով:

⁸ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար⁹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) տարեվերջին արագացել է: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2025թ. դեկտեմբերին կազմել է 315.1 մլն ԱՄՆ դոլար, սակայն շուրջ 18.2%-ով ցածր է եղել նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշից: Ընդհանուր դրամական զուտ ներհոսքի տարեկան ծավալը 2025թ. կազմել է 1.64 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով շուրջ 8.6%-ով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2025թ. տարեկան տվյալներով արձանագրվել է տնտեսական ակտիվության բավական բարձր աճի տեմպ: ՏԱՑ-ը կազմել է 9.1%՝ շուրջ 1.1 տոկոսային կետով բարձր լինելով 2024թ. ցուցանիշից: Աճի տեմպը հիմնականում արագացել է տարեվերջին՝ պայմանավորված արդյունաբերության վերականգնմամբ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է եղել ոսկու վերաարտահանման ակտիվացմամբ: Այսինքն՝ ՀՀ տնտեսական ակտիվության դինամիկան շարունակում է պայմանավորված լինել արտաքին գործոններով:

2. Արդյունաբերության աճի տեմպն արագացել է տարեվերջին՝ հիմնականում պայմանավորված ոչ կայուն գործոններով: Արդյունաբերության ոլորտի աճի տեմպը տարեվերջին էականորեն արագացել է՝ դեկտեմբերին հասնելով 38.6%-ի: Սակայն այդ աճի զգալի մասը՝ շուրջ 19.9 տոկոսային կետը, նույնաբեր ամսվա տվյալներով, պայմանավորված է «հիմնական մետաղների

⁹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկրի կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:

արտադրություն» ենթադրյալի շուրջ 2.9 անգամ աճով: Վերջինս հիմնականում արտացոլում է ոսկու վերաարտահանման աճը, ինչը բնականաբար կայուն երևույթ է, և կարող է չեզոքանալ ՀՀ տնտեսությունից անկախ գործոնների հետևանքով: Հետևաբար, այս տեսակի տնտեսական աճը կայուն է և չի նպաստում երկարաժամկետ պոտենցիալի բարձրացմանը:

3. ՀՀ պետական բյուջեն շարունակում է էականորեն շեղվել պլանավորվածից: Թեև պետական բյուջեի եկամուտները գերակատարվել են, իսկ հարկային եկամուտները հավաքագրվել են գրեթե պլանավորվածի չափ, այնուամենայնիվ պետական բյուջեի պակասուրդը շուրջ 30.6%-ով շեղվել է պլանավորվածից՝ ծախսերի բարձր թերակատարման հետևանքով: Բյուջեի կապիտալ ծախսերի կատարողականը նախորդ տարիների համեմատ բարելավվել է, ինչը հիմնականում պայմանավորված է ՊՆ ծախսերի մեծ կշռով: Պետական բյուջեի առավել մանրամասն ուսումնասիրություն հնարավոր կլինի իրականացնել բյուջեի տարեկան հաշվետվության հրապարակումից հետո:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: